ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

22 ՄԱՅԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Շահնուր Շուշանյանը, Վահե Վարդանյանը, Վրեժ Վարդանյանը, Գեվորգ Ադամյանը, Գառնիկ Ջահանգիրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Վան Գաբրիելյան, Համլետ Արամյան, Լուսինե Մարկոսյան, Կարեն Մխիթարյան, Տաթեվիկ Օհանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Ստեփանյանը

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 22.05.2025 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների պահանջներով.

Հաստատել Ճամբարակ համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 22.05.2025թ. 4-րդ հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԵՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՆԻՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԵՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1290-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 30-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 30.04.2025թ. N2/փ 143 եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությունը՝
   • Ճամբարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 05-009-0264-0008 կադաստրային ծածկագրով 2.13605 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը փոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողերի:
2. Նշված փոփոխություններն արտացոլել Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՆԻՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1290-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 30-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 21.04.2025թ. N2/փ 127 եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի Արտանիշ բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությունը՝
   - Ճամբարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 05-018-0008-0007 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.01 հա բնակավայրի այլ հողատեսքը փոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողերի
2. Նշված փոփոխություններն արտացոլել Ճամբարակ համայնքի Արտանիշ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ կետի և 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի (10-րդ հոդվածը լրաց. 05.04.00 ՀՕ-50, 30.04.08 ՀՕ-55-Ն, 08.12.11 ՀՕ-353-Ն, 21.03.12 ՀՕ-95-Ն) 11-րդ կետի պահանջները, ֆիզիկական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները և մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց համար սահմանել արտոնություններ հետևյալ չափերով՝

Հ/Հ	Անուն, ազգանուն	Հողի/գույքի գտնվելու հասցեն	Արտոնության տեսակը	Մայր գումար /ՀՀ դրամ/	Տույժ /ՀՀ դրամ/
1.	Արարատ Ասատրյան	ք. Ճամբարակ	Հողի հարկ	0	10410
2.	Վարդան Գևորգյան	ք. Ճամբարակ	Հողի հարկ	0	17853

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Պ. Սևակի 89/3 հասցեում գտնվող, 05-002-0002-0007 կադաստրային ծածկագրով 0.04174 հա մակերեսով բնակավայրի հողամասը՝ 275.41 քմ մակերեսով շինությունով 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման նպատակով տրամադրել «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ին՝ Ճամբարակ քաղաքում երիտասարդական կենտրոնի ստեղծման և գործարկման նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30 հունվարի 2025թ.-ի N 78-Ա որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Միավորված ազգերի զարգացման ծրագրի կողմից որպես նվիրատվություն ընդունել հավելված 1-ում նշված գույքը /կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Իրավական ակտը գաղտնիության ռեժիմում է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Որոշումը հրապարակման ենթակա չէ, գտնվում է ռեժիմային օբյեկտում:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օր սահմանել 2025 թվականի հունիսի 25-ը, ժամը 15:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ա)*

Ավագանու անդամներ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՕՀԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՃԱՂԱՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԶՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՋԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԳԱԳՅԱՆ

ՍԵՎԱԿ ՋԱՌԱՀՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՆԱԴԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՎԻԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արտակ Ստեփանյանը

_____